ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 ապրիլի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

57
(2907)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼՈՒՑ



Ապրիլի 15-ին հանրային տրանսպորտում տեղի ունեցած միջադեպը՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանի եւ քաղաքացի Սամվել Վարդանյանի միջեւ, ակնհայտ դարձավ քաղաքական հետապնդման գործիք:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ խնդրելով գնահատական տալ կատարված խայտառակ աննախադեպ բռնությանը եւ սեռական նսեմացման դեպքին:

Հիշեցնենք, որ քննչական ծառայությունից ԶՊՎ տեղափոխելու ճանապարհին, ամբողջությամբ սեւ հագած դիմակավորված անձինք ոստիկանական մեքենայից դուրս էին հանել Սամվել Վարդանյանին, տարել էին մի քանի մետր այն կողմ՝ խոտերի մեջ, ջոքեցրել, գլուխը խփել գետնին (ըստ երեւույթին՝ նրա ճակատի ուռածությունը հենց այդ դեպքի հետեւանքն էր) ու սկսել էին ձեռքերով հարվածել: Այդ ամբողջ գործընթացը ուղեկցվել էր սեռական բնույթի հայհոյանքներով, վերջին խոսքերով:

Ընդ որում, ծեծողները պահանջել էին Սամվելից, որ կրկնի իր նկատմամբ հնչեցրած սեռական բնույթի հայհոյանքները, վերջում թքել էին նրա վրա: Այնուհետեւ, նրան՝ ջոքած վիճակում, ձեռքերը՝ հետեւի կողմից ձեռնաշղթայված, տաբատը իջեցրել էին, փայտը կամ «դուբինկան» դեմոնստրատիվ պահել ոտքերի արանքում՝ այդպիսով ցանկանալով ինչ-որ բան ցուցադրել, սպառնալ կամ վախեցնել:

Ժողովրդավարությունը որպես թիվ մեկ «բրենդ» հռչակած կառավարության ղեկավար, ի՞նչ գնահատական ունեք այս երեւույթին եւ ինչ քայլեր եք ձեռնարկել այս անպատժելիության առիթով:

«Ժողովուրդ» օրաթերթի այս հարցին, սակայն, Նիկոլ Փաշինյանը, խուսափել է պատասխանելուց եւ հանձնարարել է այն հասցեագրել դեպքի փաստացի հանցակից ՀՀ ներքին գործերի նախարարությանը:

ՆԳՆ-ից մեզ պատասխանել են, որ ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչությունում իրականացվում է ծառայողական քննություն:

Հավելել են. «Արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ»:

Ստացվում է, որ ՀՀ վարչապետի աշխատակազմում ոչ միայն հարցերի բովանդակությունը չեն կարդում, այլեւ խմբային խուսափում են գնահատական տալուց իրենց իշխանության օրոք տեղի ունեցած խայտառակ բռնությունների կոնկրետ դեպքին:

Ապրիլի 15-ին պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն էր ժամանել Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը: Վերջինս հանդիպումներ էր ունեցել Նիկոլ Փաշինյանի, Ալեն Սիմոնյանի եւ Վահագն Խաչատուրյանի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ պաշտոնական այցով Հայաստան եկած Կասիմ-Ժոմարտ Տոկաեւն այդպես էլ չայցելեց Ծիծեռնակաբերդ, որը մինչ այս պարտադիր էր գրեթե բոլոր պետական այցերի ժամանակ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԱԳՆ՝ պարզելու՝ Ղազախստանի նախագահի այցի շրջանակներում ինչո՞ւ չի նախատեսվել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այց եւ հարգանքի տուրքի մատուցում: Հետաքրքրվեցինք՝ հայկական կողմից Ղազախստանի նախագահին արդյոք նման առաջարկ արվե՞լ է, եւ գուցե նա՞ է մերժել: ՀՀ ԱԳՆ-ից պատասխանեցին, թե Ծիծեռնակաբերդ այցը պաշտոնական այցերի պրոտոկոլային մաս չէ. «Պաշտոնական այցերի համար սահմանված արարողակարգային ընթացակարգերին համապատասխան՝ Ղազախստանի նախագահի այցի ընթացքում կայացել են հանդիպումներ ՀՀ նախագահի, վարչապետի եւ Ազգային ժողովի նախագահի հետ: Պաշտոնական այցերի ծրագիրը կազմվում է փոխադարձ համաձայնեցմամբ՝ հաշվի առնելով այցի ընդհանուր օրակարգը եւ քննարկվելիք հարցերի շրջանակը»: Նկատենք, որ մինչ այս, թե՛ օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների, թե՛ պատվիրակությունների պաշտոնական այցերի օրակարգում Ծիծեռնակաբերդ այցը մշտապես պարտադիր է եղել. հասկանալի է, որ սա հայկական կողմի պարտադիր պահանջն է եղել, որին գործընկերները համաձայնել են: Հիմա, փաստորեն, «իրավիճակ է փոխվել», ու Ծիծեռնակաբերդ այցը այլեւս պարտադիր չէ: Հաշվի առնելով ՀՀ իշխանությունների՝ Ցեղասպանությունը եւ դրա զոհերի թիվն ու ինքնությունը կասկածի տակ դնող հայտարարությունները, կարելի է ենթադրել, որ հենց նրանց նախաձեռնությամբ էլ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցն այլեւս արարողակարգային պայման չէ:



Գնել Սանոսյանը «գովերգում է», իսկ իր տեղակալը համարում է միջազգային մեքենայությունների հեղինակ. ո՞վ է ի վերջո խոշոր գործարար Գեւորգ Նալբանդյանը, ում կենսագրության մեջ միայն նշված է վերջինիս՝ Շվեդիա տեղափոխվելու փաստը, իսկ լուսանկարը չի հանդիպում ոչ մի բաց աղբյուրում: Ավելին՝ ՏԿԵՆ փոխնախարար Արմեն Սիմոնյանը բառացի հայտնում է, թե «անձը մեքենայությունների մեջ է եղել, բայց թղթերը ներկայացրել է, ստացել վկայական, օդանավն առեւանգել ու այլ երկիր տարել»: Այսպիսով՝ հեղափոխության հերթական նվաճում համարվող «Հայվեյզ» ավիաընկերությունը, ում «Բոինգը» առեւանգվեց եւ հայտնվեց Իրանի Իսլամական Հանրապետությունում, պարուրված է մութ անցյալ ունեցող հիմնադիրների հետ. պատմությունը, թերեւս, կարող էր լուսաբանել ՏԿԵՆ փոխնախարար Արմեն Սիմոնյանը. բայց նա խոսում է ակնարկներով:

Մինչ Տավուշում իրավիճակը լարված է, եւ քաղաքացիները պայքարում են իրենց հող ու ջրի համար, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, այս իրավիճակին զուգահեռ, դատախազությունում կադրային փոփոխությունների մասին է հայտարարում, եւ ըստ հայտարարության՝ պաշտոնից ազատում է Տավուշի մարզի դատախազ Գոռ Ալոյանին: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Տավուշի դատախազ Գոռ Ալոյանը ինքն է անձամբ դիմում գրել հեռանալու համար՝ այլ ուժային կառույցում աշխատելու նպատակով, սակայն, այս իրավիճակում ուշագրավն այն է, որ Գոռ Ալոյանը Տավուշի դատախազի պաշտոնը լքում է Տավուշի համար ճակատագրական պահին:

ԼՈՒԹՅՈՒՆ Է

«ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԼՈՒՌ Է». ԳՈՌ ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Բռունցքդ բեր» քաղաքացիական շարժման անդամները երեկ եկել էին խորհրդարան: ArmLur.am-ը զրուցել է նախաձեռնության անդամակից Գոռ Առաքելյանի հետ՝ հասկանալու, թե ինչ նպատակով էին նրանք եկել ԱԺ:

-Պարոն Առաքելյան, նախ կխնդրեմ ասեք՝ ի՞նչ ծրագրով եք դիմում ներկայացրել Ազգային ժողով:

-«Բռունցքդ բեր» քաղաքացիական նախաձեռնության կոչը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին այն է, որ Հայաստանի անվտանգության, ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության հետ կապված իրենց պարտավորությունները կատարեն: Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող Ազգային ժողով մարմինը պետք է կառավարության վարած քաղաքականության վերահսկողը լինի: Մենք համարում ենք, որ կառավարությունը սխալ է տանում սահմանագծման եւ սահմանազատման քաղաքականությունը. այն, ինչ կատարվում է, մենք որակում ենք որպես միակողմանի զիջումներ, ոչ թե սահմանագծում եւ սահմանազատում, որովհետեւ չկա համապարփակ որեւէ քարտեզ, թե ինչպիսին է լինելու Հայաստանի տարածքը սահմանի ամբողջ երկայնքով. խորհրդարանն էլ, կարծես, լուռ է: Եթե կարճ ասեմ, մենք պահանջում ենք, որ Ազգային ժողովն իրացնի իր լիազորությունները եւ պատասխանատվության կանչի կառավարությանը:

-Ինչպե՞ս եք պատկերացնում կառավարությունից պատասխան պահանջելու գործընթացը:

-Խորհրդարանը իրավունք ունի ցանկացած պահի կառավարությանը հարցուպատասխանի կանչելու: Վիճակը այժմ օրհասական է. Տավուշում լարված է, Ոսկեպարի եկեղեցու մոտ եկել են Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցները, ինչ-որ ականազերծում են փորձում անել, Ոսկեպարի բնակիչները հավաքվել են այդտեղ, փորձում են խոչընդոտել, մի խոսքով՝ լարված իրավիճակ է, բայց խորհրդարանին, կարծես, դա այնքան էլ չի հետաքրքրում, որ գոնե այս պահին մի արտահերթ նիստ հրավիրի, կանչի կառավարությանը, ու փորձեն ելք գտնել. իհարկե, այնպիսի ելք, որը կբխի Հայաստանի շահերից, քանզի բոլորիս էլ հասկանալի է, որ այն, ինչը հիմա կատարվում է, բացարձակապես չի բխում Հայաստանի շահերից:

-Որոշ ժամանակ առաջ այդպիսի նիստ հրավիրել էին, արտգործնախարարը եւ փոխվարչապետը մասնակցում էին, բայց, ինչպես ընդդիմադիրները փոխանցեցին, անորոշ պատասխաններ են հնչել. այսինքն՝ ոչինչ չտվող է սա:

-Դա փակ նիստ է եղել:

-Այսինքն, դուք բա՞ց նիստ եք պահանջում:

-Մեր պահանջը հետեւյալն է. եթե խորհրդարանը ընտրում է վարչապետին, այդ խորհրդարանի պատգամավորներին էլ ընտրում է ժողովուրդը, այսինքն բոլորը՝ թե՛ խորհրդարանը, թե՛ կառավարությունը հաշվետու են իրենց ընտրողների առջեւ, եւ այդ ընտրողները պետք է քաջ ծանոթ լինեն բոլոր այն գործընթացներին, որոնք որ կատարվում են, որովհետեւ դա իրենց է վերաբերում, իրենց կյանքին ու ապագային: Այս երկիրը միայն խորհրդարանի պատգամավորներին ու կառավարությանը չի պատկանում, ամբողջ հայ ժողովրդինն է. ուստի այն, ինչը կատարվում է Հայաստանի Հանրապետության շուրջ, պետք է հուզի ողջ հայ ժողովրդին:

Ի դեպ, եթե խորհրդարանի պատգամավորները կամ կառավարության անդամները տեղյակ չեն, ՀՀ սահմանների հետ կապված՝ սահմանադրությունում հստակ նշված կետ կա, որ փոփոխությունները եւ մնացյալ գործողությունները պետք է կատարվեն ՀՀ օրենսդրության շրջանակներում, եւ որոշ դեպքերում նաեւ հանրաքվե պետք է անցկացվի՝ այդ հարցերին լուծում տալու համար: Ինչպե՞ս կարող են փակ նիստ անել, որ մարդիկ չիմանան՝ ինչ է կատարվում, գնան, իրար մեջ որոշեն, եւ մի օր բոլորս կանգնենք փաստի առաջ. արթնանանք եւ տեսնենք, թե ՀՀ տարածքից մի կտոր մերը չէ այլեւս: Ընդհանրապես, ստեղծված այս իրավիճակն անհասկանալի է, քանի որս ՀՀ-ն միայն Տավուշի հատվածում չէ, որ սահման ունի Ադրբեջանի հետ, մի ամբողջ երկայնք կա, որով սահմանակից ենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ

Հոգեւորականները կրկին հայտնվել են իշխանականների թիրախում:

Բանն այն է, որ Տավուշում տեղի ունեցող վերջին թեժ զարգացումներից հետո տեղի բնակիչները դուրս են եկել փողոց եւ իրենց բողոքի ձայնն են բարձրացնում՝ ընդդեմ նոր տարածքային զիջումների:

Ակցիա իրականացնող քաղաքացիների կողքին են նաեւ հոգեւորականները՝ Տավուշ թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանի գլխավորությամբ. նրանք եւս պայքարում են ընդդեմ նոր զիջումների:

Սրա արդյունքում՝ հոգեւորականությունը հերթական անգամ հայտնվել է իշխանության թիրախում: ՔՊ-ականներից շատերը իրենց գրառումներում քննադատում եւ կոշտ հայտարարություններ են անում հոգեւարականների, մասնավորապես՝ Բագրատ Սրբազանի հասցեին: Իշխանականները, թերեւս, գիտակցում են, որ այս իրավիճակում միայն եկեղեցին կարող է համախմբել մարդկանց իր շուրջ, ու այս մասով լուրջ մտահոգություններ ունեն:

Ո՞ՒՐ ԵՆ ԿՈՐԵԼ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ

Տավուշի գյուղերի սահմանազատման շուրջ ստեղծված աղմուկին զուգահեռ, երբ Ոսկեպարում, Բաղանիսում, Կիրանցում եւ Բերքաբերում ակցիաներ են, ՔՊ պատգամավորները կրկին ընդհատակ են անցել: Նրանք տեսադաշտից կորչում են այն ժամանակ, երբ երկիրը լուրջ վնասների առջեւ է կանգնած լինում, եւ Հայաստանը մեծաբերան շների երախում է հայտնվում:

Այսպիսով՝ փորձել ենք պարզել, թե ո՞ւր են ճամփորդում ՔՊ-ական պատգամավորներն այս օրհասական պահին:

Օրինակ՝ Բաբկեն Թունյանը Վրաստանում է՝ ըստ ԱԺ նախագահի կարգադրության: Արուսյակ Մանավազյանը եւ Տաթեւիկ Գասպարյանը Վաշինգտոնում են: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, Ազգային ժողովի եվրաինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը, Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Թագուհի Ղազարյանը, Ազգային ժողովի նախագահի խորհրդական Աշխեն Հայրապետյանը, Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար Նելլի Ղուլյանը այս պահին գտնվում են Իսպանիայի Թագավորության Պալմա քաղաքում: ՔՊ-ականներ Արփինե Դավոյանը եւ Լուսինե Բաղալյանը եւս գտնվում են Ամերիկայի Միացիալ Նահանգներում:

Հավելենք նաեւ, որ Նիկոլ Փաշինյանի ձայնը եւս չի լսվում. փոխարենը՝ իշխանական լրատվամիջոցները քարոզում են, թե Տավուշի ցուցարարները «Երեւանից են բերված» եւ ուղղորդվում են Ռուսաստանի կողմից: Հարկ է նշել, որ Հայաստանը մասնատումից փրկելու համար պայքարելը ծննդավայրի հետ կապ չունի:

Իշխանական լրատվամիջոցները քարոզում են նաեւ, թե Բագրատ Սրբազանը հակահայ ռուս գործակալ է. դրանով փորձ է արվում նսեմացնել հոգեւորականի աշխատանքը եւ հուսալքել նրա կողքին կանգնած տավուշցիներին: Սակայն, պատմությունը ցույց է տվել, որ հենց եկեղեցին է եղել պետականության պահպանման եւ ժողովրդի միասնության սյունը, եւ այժմ էլ այդպես է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՁԱՄԲ Է ՀՐԱՀԱՆԳԵԼ

Նիկոլ Փաշինյանն ու իր քարոզչական խմբակները թեզ են շրջանառում, որ ով պայքարում է Նիկոլ Փաշինյանի դեմ, ուղղորդվում է Ռուսստանի Դաշնության կողմից: «Ռուսի ստրուկ», «ռուսի ծառա» եւ այլ վիրավորական ձեւակերպումներով փորձում են Նիկոլ Փաշինյանի իշխանության նկատմամբ բոլոր քննադատություններն ու գործողությունները վիժեցնել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանն անձամբ է հրահանգել վարչապետի աշխատակազմի առընթեր քարոզիչներին՝ պախարակել հայ հոգեւորականներին, Կիրանցում, Ոսկեպարում, Բաղանիսում գտնվող մարդկանց կողքին կանգնած այլ ակտիվ գործիչների: Քարոզչությունն իրականացվում է մեկ կենտրոնից եւ տարածվում հանրային եւ մասնավոր իշխանական մի շարք ՁԼՄ-ներով, օգտահաշիվների կողմից եւ սոցցանցերի տարբեր հարթակներում:

Սա ոչ այլ ինչ է, քան սադրանք ՀՀ քաղաքացու նկատմամբ՝ ուղղորդված վարչապետի կողմից, քանի որ այն դրդում է տարբեր գործողությունների:

Եվ այս ողջ գործելաոճի արդյունքում, երբ խլացվում են խնդիրները, Նիկոլ Փաշինյանի հրամանով ակտիվանում է Ոսկեպարի 7-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցու տարածքը. գուցե նրա համար, որ ադրբեջանցիները հեշտությամբ հասնեն եկեղեցի, եւ խաչը հեռացնելով՝ եկեղեցին վերածեն մզկիթի: Այդպես եղավ եւ շարունակում է տեղի ունենալ Արցախի մշակութային եւ կրոնական բոլոր կոթողների հետ:

ՈՍԿԵՊԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՄՆԱ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հայաստանի փոխվարչապետ, Ադրբեջանի հետ սահմանազատման հարցերով հանձնաժողովի նախագահ Միհեր Գրիգորյանի գրասենյակը հերքում է շրջանառվող խոսակցությունները, թե Տավուշի մարզի Ոսկեպար գյուղում գտնվող, 6-7-րդ դարերի Սուրբ Աստվածածին եկեղեցին հանձնվելու է Ադրբեջանին: Միհեր Գրիգորյանի գրասենյակից հավաստիացրին, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման վերաբերյալ պայմանավորվածությունները կյանքի կոչելուց հետո Ոսկեպարի եկեղեցին մնալու է Հայաստանի տարածքում:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման վերաբերյալ պայմանավորվածության դեմ իրենց բողոքն արտահայտող Տավուշի մարզի մի շարք բնակավայրերի բնակիչներն ապրիլի 22-ին իրենց բողոքի ակցիան շարունակել են Ոսկեպարի եկեղեցու մոտ, որտեղ, ըստ նրանց, իրականացվում են ականազերծման աշխատանքներ, որպեսզի տարածքը հանձնեն Ադրբեջանին: Այս համատեքստում խոսակցություններ էին շրջանառվում, որ Ոսկեպարի եկեղեցին եւս սահմանազատում իրականացնելուց հետո կանցնի Ադրբեջանի վերահսկողության տակ:

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«Տավուշում ընթացող զարգացումների համատեքստում ՀՀ իշխանությունների առանձին ներկայացուցիչներ եւ նրանց ձայնակցող այլազան անհատներ ստի ու կեղծիքի տարածման միջոցով արշավ են ձեռնարկել Հայ Եկեղեցու, ի մասնավորի՝ Տավուշի թեմի առաջնորդի նկատմամբ, ով հանդես է գալիս հայրենիքի անվտանգության եւ իր թեմի հավատավոր զավակների իրավունքների պաշտպանության մտահոգությամբ»: Այս մասին հայտարարություն է տարածել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգը:

«Հորդորում ենք դադարեցնել անվայել եւ պախարակելի գործելաոճը, որը միմիայն անհամերաշխություն եւ ատելություն է սերմանում անվտանգային սպառնալիքներ դիմագրավող մեր հասարակության մեջ»,-ասված է հայտարարությունում:

ԱՄԷ–Ն ՈՂՋՈՒՆԵԼ Է ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Արաբական Միացյալ Էմիրությունները սահմանազատման վերաբերյալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համաձայնությունը համարում է նշանակալի քայլ, որը կարող է ամրապնդել երկխոսության կամուրջներն ու նպաստել կովկասյան տարածաշրջանում կայունությանը:

Հայտարարությունը հրապարակվել է ԱՄԷ-ի արտաքին գործերի նախարարության կայքում: Հայտարարությամբ, մասնավորապես, նշվում է, որ Արաբական Միացյալ Էմիրությունները ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ չորս գյուղերի տարածքում սահմանների սահմանազատման եւ սահմանագծման վերաբերյալ համաձայնությունը: ԱՄԷ-ն հետեւում է երկու երկրների միջեւ վստահության կառուցման եւ խաղաղության ամրապնդման զարգացող գործընթացին: ԱՄԷ-ն հույս է հայտնում, որ այս նշանակալի քայլը կամրապնդի հաղորդակցության եւ երկխոսության կամուրջները եւ կնպաստի կովկասյան տարածաշրջանում կայունության եւ կառուցողական համագործակցության խթանմանը:

Պետական նախարար Ահմեդ բեն Ալի Ալ Սայեղն ընդգծել է, որ ուղղակի հաղորդակցության միջոցով հաստատված այս դրական զարգացումը կարեւոր քայլ է դեպի համապարփակ խաղաղության համաձայնագիր, որը կխթանի զարգացումը եւ խաղաղությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Պետական նախարարը նշել է, որ դա օգուտ կբերի երկու երկրներին եւ ժողովուրդներին:

ԲՈՒՀԵՐԻ ԱՐՇԱԳԱՆՔԸ

ՃՆՇՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ՝ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Ապրիլի 11-ին ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանը իր ամփոփիչ ելույթում, անդրադառնալով Արմենուհի Կյուրեղյանի խոսքին, ասաց. «Մեր բուհական համակարգի գիտական կոնտենտը 90-ականներից դակասել է, եւ եկել է այս գողական կոնտենտը, որ դեկանատի դեմը ինչ ասվում է, արվում է...Կներեք մեր բուհական համակարգը այսօր հոգեվարքի մեջ է. Դուք դա չեք նկատում: Եթե մենք լինենք անդատապարտելիություն, կասենք՝ դե ինչ լինում է՝ թող լինի»:

Փաշինյանն իր խոսքով հասկացրեց, որ համալսարանը դարձել է «գողականների» հավաքատեղի, եւ որոշակի հատված կա, որ սահմանում է, թե ով է բուհում «լավ տղա» կամ «լավ դասախոս»:

ArmLur.am-ը հերթով դիմոց բոլոր պետական բուհերին՝ հասկանալու համար, թե ինչու են, ըստ Փաշինյանի, «հոգեվարքի մեջ»: Համալսարաններին խնդրել էինք նաեւ մեկնաբանել ՀՀ բարձր ամբիոնից հնչած հայտարարությունը:

Հարցման պատասխաններ ստացանք 3 համալսարաններից՝ ԵՊՀ-ից, ՀՊՄՀ-ից, Երեւանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայից եւ ՀՖԿՍՊԻ-ից:

ԵՊՀ-ից ստացանք հետեւյալ պատասխանը.

«Անհրաժեշտ տեղեկությունը չի պարունակում օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ, որոնք, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ենթակա են հրապարակման: Հետեւաբար՝ Ձեր հարցումը թողնվում է անհետեւանք»:

Փաստացի՝ համալսարանը հրաժարվել է մեկնաբանել ՀՀ վարչապետի հայտարարությունը, ով թիրախավորել էր իրենց իսկ աշխատանքը:

Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը պատասխանել էր հետեւյալը՝ կարծիքի արտահայտումը համարելով ոչ ճիշտ.

«ՀՀ Սահմանադրության Ձեր մատնանշած 42-րդ հոդվածը երաշխավորում է անձի կարծիքի արտահայտման ազատությունը: Բնական է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք»: Այսինքն, կարծիք ունենալն ու արտահայտելը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու անօտարելի իրավունքն է: Բայց եւ որեւէ մեկը օրենսդրական պարտավորություն չունի մեկնաբանելու մյուսի կարծիքը: Ձեր հարցադրումներն ամբողջությամբ տեղավորվում են կարծիքի մասին կարծիք արտահայտելու տրամաբանության մեջ»:

Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտից, մեր հարցմանն ի պատասխան, տեղեկացանք, որ ինստիտուտը ՀՀ ԱԺ-ում ունեցած ելույթին ծանոթ չլինելու հանգամանքով պայմանավորված՝ չի կարող մեկնաբանել կամ կարծիք ներկայացնել:

Հայաստանի Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանից էլ զանգահարեցին եւ նշեցին՝ նպատակահարմար չեն գտնում պատասխանել հարցմանը, քանի որ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը գիտնական է եւ քաղաքական որեւէ դեպքի մեկնաբանություն չի կարող տալ:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան թերեւս ամենաինքնուրույն համալսարանն էր, որը հստակ՝ կետ առ կետ տվել է պատասխան:

«1. Եթե խոսքը կոնսերվատորիայի մասին է, ապա բուհը բնավ հոգեվարքի մեջ չէ: Այդ են վկայում կոնսերվատորիայի առօրյա եռուզեռը, ուսանողների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հաջողությունները մրցույթներում ու փառատոնեռում, մենագրությունների եւ գիտական ու հրապարակախոսական հոդվածների հրապարակումները, ակտիվ մասնակցությունը մայրաքաղաքի համերգային կյանքին, գիտաժողովներին, հանրային քննարկումներին:

2. Կոնսերվատորիական կրթության կազմակերպմանը կարող են խաթարել միայն անիրազեկ միջամտությունը բուհի ինքնավարությանը, անտեղյակությունը մասնագիտական առանձնահատկություններին, ասեկոսեների մակարդակի լրատվությունը, ինչը, ըստ էության, չի կարող որեւէ ազդեցություն ունենալ ԵՊԿ վարքի վրա, որովհետեւ բուհի դրական արդյունքները հակառակի մասին են վկայում:

3. Նման բան լինել չի կարող: Ինչ վերաբերում է կոնսերվատորիային, ապա այն երբեւէ չի եղել Ձեր կողմից նշված որակների շրջանակում, քանի որ ինքնին տարբերվող է արվեստի, մշակույթի հետ կապված կոնտինգենտը:»

Կոնսերվատորիան պատասխանել է, բայց այնուամենայնիվ հավելել է, որ կոնտեքստից կտրված մեջբերումը չեն մեկնաբանում:

Ստացվում է, որ համալսարանները, բուհերը ոչ թե հոգեվարքի, այլ ճնշման մեջ են: Այս տեսակետն ամրապնդվում է, երբ կարդում ենք համալսարաններից ուղարկված խուսափողական պատասխանները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ–Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հարավային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարին:

Ինչպես տեղեկացնում է վարչապետի աշխատակազմը իր տարածած հաղորդագրությունում, հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը:

Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային իրավիճակին, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններին, սահմանազատման գործընթացին: Քննարկվել են Հայաստան-Եվրոպական միություն համագործակցությանն ու դրա հետագա զարգացմանը վերաբերող հարցեր:

Տոյվո Կլաարը եւս մեկ անգամ նշել է, որ ԵՄ-ն լիովին աջակցում է Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացին՝ համապարփակ ու տեւական կարգավորման նպատակով, ինչպես նաեւ 1991թվականի՝ Ալմաթիի հռչակագրի հիման վրա սահմանազատման գործընթացի մեկնարկի պայմանավորվածությանը:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄՈԼՈՐԵՑՐԵԼ Է ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ կատարած իր վերջին այցի ժամանակ հակասական տեղեկություններ է տարածել ու փորձել է մոլորեցնել տեղացիներին:

Այսպիսով՝ ապրիլի 17-ին Տավուշի գյուղերի հանձնման շուրջ թեժ խոսակցությունների ֆոնին՝ Նիկոլ Փաշինյանը կրկին գնացել էր Տավուշ եւ հանդիպել էր Ոսկեպար, Կիրանց եւ Բերքաբեր գյուղերի բնակիչների հետ:

Ինչպես ArmLur.am-ի աղբյուրներն են փոխանցում, գյուղացիների հետ հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը հակասական տեղեկություններ է տարածել. Ոսկեպարում նա վստահեցրել է, թե անհանգստանալու կարիք չկա, ադրբեջանցիների հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, որ նոր տարածքներ չեն զիջվելու, մյուս գյուղերում է սահմանազատում իրականացվելու, Կիրանցում եւ Բերքաբերում էլ նույնպես, Փաշինյանն ասել է, թե մտահոգվելու կարիք չկա, իրենց գյուղերին, բնակավայրերին վտանգ չի սպառնում:

Իսկ ահա, ուրբաթ օրը, երբ ԱԳՆ-ն եւ վարչապետի աշխատակազմը արդեն պաշտոնապես հաստատեցին, որ Տավուշում սահմանազատում անվան տակ նոր զիջումներ են լինելու, ադրբեջանական զորքերն ավելի են մոտենալու Տավուշի բնակավայրերին, քաղաքացիները խուճապի են մատնվել եւ հասկացել են, որ Նիկոլ Փաշինյանը պարզապես փափուկ բարձ է դրել իրենց գլխի տակ ու մոլորեցրել. իրականում իրենց բնակավայրերը վտանգի տակ են:

Ահա այս հայտարարություններից հետո տավուշցիները ոտքի են կանգնել ու արդեն երեք օր է փակ են պահում Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԸ ՆՈՐ ԴԱՏԱԽԱԶ ՈՒՆԻ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2024 թվականի ապրիլի 8-ի, 9-ի, 17-ի, 18-ի, 19-ի եւ 22-ի հրամաններով՝ Դատախազությունում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ:

Այս մասին տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Մասնավորապես՝ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Արմեն Մուրադյանը փոխադրվել է Տավուշի մարզի դատախազի պաշտոնին:

Շիրազ Գրիգորյանը նշանակվել է Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության ավագ դատախազի պաշտոնից:

Մարատ Հակոբյանը նշանակվել է Գլխավոր դատախազության՝ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության ավագ դատախազի պաշտոնից:

Հարություն Մաշադյանը նշանակվել է Գլխավոր դատախազության՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության դատախազի պաշտոնից:

Ծովակ Մնացականյանը նշանակվել է Գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչության դատախազի պաշտոնից:

Գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Վաչե Ղազարյանը փոխադրվել է Գլխավոր դատախազության՝ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին:

Գլխավոր դատախազության՝ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Կարապետ Համբարձումյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Գայանե Աղաջանյանը փոխադրվել է Երեւան քաղաքի դատախազության ավագ դատախազի պաշտոնին:

Կարեն Սուքիասյանը նշանակվել է Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով Կոտայքի մարզի դատախազի տեղակալի պաշտոնից:

Տավուշի մարզի դատախազ Գոռ Ալոյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արթուր Դանիելյանը նշանակվել է Գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնին՝ ազատվելով Երեւան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնից:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ Մանյա Գալուստյանը փոխադրվել է նույն վարչության դատախազի պաշտոնին:

Արգամ Դալլաքյանը նշանակվել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանի դատախազի պաշտոնից:

Ռիտա Հարությունյանը նշանակվել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնին:

Սպարտակ Մնացականյանը նշանակվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանի դատախազության դատախազի պաշտոնից:

Արթուր Հեբոյանը նշանակվել է Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնին՝ 2024 թվականի ապրիլի 23-ից:

Դավիթ Ներսիսյանը նշանակվել է Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանի դատախազության դատախազի պաշտոնից:

Մարիա Հովհաննիսյանը նշանակվել է Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Արեգ Հարությունյանը նշանակվել է Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Հովհաննես Բաղյանը նշանակվել է Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Մերի Ցականյանը փոխադրվել է Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին:

Նարեկ Արշակյանը նշանակվել է Սյունիքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Հարություն Անդրեասյանը նշանակվել է Սյունիքի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնից:

Հրաչյա Մարգարյանը նշանակվել է Լոռու մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն մարզի դատախազության դատախազի պաշտոնից:

Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության դատախազ Կարապետ Սմբատյանը փոխադրվել է Արարատի մարզի դատախազության դատախազի պաշտոնին:

Շիրակի կայազորի զինվորական դատախազության դատախազ Կարապետ Մկրտչյանը փոխադրվել է Երեւանի կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնին:

Երեւանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Արմինե Սարգսյանը փոխադրվել է Շիրակի կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնին:

137 ՎԱՐՈՒՅԹ՝ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ

Որո՞նք են վերջին մեկ տարում հարուցված վարույթների պատճառները:

2023 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված հարյուր երեսունյոթ վարույթներից հարյուր յոթը կուսակցությունների հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ են:

Հարուցված վարույթներից քսաներկուսը կապված են հայտարարագրերին առնչվող խախտումների հետ:

Երեք վարույթ հարուցվել է նվերներ ընդունելու խախտման առնչությամբ:

Անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների վերաբերյալ հարուցվել է հինգ վարույթ: Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներից քսանը վերաբերել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու խախտումներին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ՕՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Հակակոռուպցիոն դատարանում երեկ կայացել է 44-օրյա պատերազմում զոհված (անհետ կորած համարվող) «Քիմիկների գործով» նիստը:

Նիստը դռնփակ է եղել, հարցաքննվել է ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը:

Ծնողները աղմկել են, ներսում բարձր ձայներ են լսվել: Ըստ էության՝ 44-օրյա պատերազմի զոհերի հարազատները հարցեր են տվել ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Էջմիածնի «Քիմիկների» զորամասի անհետ կորած զինծառայողների գործով հակակոռուպցիոն դատարան հարցաքննության է հրավիրվելու նաեւ Հայաստանի Հանրապետության ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Օնիկ Գասպարյանը: Նա նախաքննության ընթացքում այս քրեական գործով հարցաքննվել եւ ցուցմունք է տվել, ուստի դատարանը հարցաքննության է հրավիրելու նաեւ նրան: Էջմիածնի «Քիմիկների» զորամասի անհետ կորած զինծառայողների գործով հակակոռուպցիոն դատարանում տեւական ժամանակ է՝ հարցաքննվում են անհետ կորած կամ զոհված զինծառայողների ծնողները. իսկ այդ գործով մեղադրյալներ են ԳՇ պետի նախկին տեղակալ Անդրանիկ Մակարյանը եւ զորամասի այլ պաշտոնյաներ: Անդրանիկ Մակարյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության ՔՕ 376 հոդվածի 3-րդ մասով:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության ՔՕ 376 հոդվածի 3-րդ մասը սահմանում է անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ. սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, եթե դրանք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: Անդրանիկ Մակարյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ երկրից չհեռանալու մասին»:

ՊՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏԸ ՔԱՐԵՐՈՎ ՀԱՐՎԱԾԵԼ Է ԶՈՔԱՆՉԻՆ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում. ՊՆ փոխգնդապետը քարերով հարվածել է զոքանչին:

Ժամը 12:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ Բալահովիտ գյուղի տներից մեկում վիրավոր քաղաքացի կա, ով գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում:

Ոստիկաններն ու պարեկները նշված գյուղի 14-րդ տան բակում հայտնաբերել են ամբողջությամբ արյան մեջ թաթախված, գլխի մասում վնասվածքներով տանտիրուհուն: Կասկածյալը քնքիչ Տ. Բաղյանի որոշմամբ ձերբակալվել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 19-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 223 դեպք, որից 15-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵՑԻՆ

Ամիսներ շարունակ ոստիկանության Դիլիջանի բաժնի պետի պաշտոնը թափուր էր, ինչը բացասաբար էր անդրադառնում Դիլիջանի բաժնի աշխատանքի, Դիլիջան համայնքում կատարված հանցագործությունների բացահայտման վրա: Ապրիլի 2-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել ՀՀ ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանին, ի թիվս այլ հարցերի՝նրան հարցնելով, թե երբվանի՞ց է թափուր ոստիկանության Դիլիջանի բաժնի պետի պաշտոնը, ե՞րբ է նշանակվելու այդ բաժնի պետ: Ապրիլի 16-ին ստացել ենք ոստիկանության Դիլիջանի բաժնի պետ, գնդապետ Գուրգեն Խաչատրյանի գրությունը, որտեղ նշված է. «02.04.2024թ. ՀՀ ներքին գործերի նախարարի համապատասխան հրամանով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի պետի թափուր պաշտոնը համալրվել է»: Ամիսներ շարունակ Դիլիջանի ոստիկանապետի պաշտոնը թափուր էր, սակայն մեր հարցման օրը, ուշագրավ զուգադիպությամբ, այդ պաշտոնը համալրվեց:

ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ Է՝ ԲԱՑԻ ԱՇԽԱՏԵԼՈՒՑ

Դիլիջան քաղաքի կենտրոնում հանրահայտ «Միմինո» արձանախմբի մոտ ձգվող ավտոճանապարհին եւ տուրիստական քաղաքի այլ հատվածներում մեծ փոսեր են: Դիլիջանի բնակիչներն ասում են, որ Դիլիջան համայնքի ղեկավար, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, անձնական գործում իր սեռը «արու» գրած ՔՊ կուսակցության՝ Դիլիջանի կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը, փոխանակ Դիլիջանի փողոցների փոսերը լցնի, ապրիլի 17-ին սահմանամերձ Ոսկեպարում մասնակցել է ոսկեպարցիների հետ Նիկոլ Փաշինյանի հանդիպմանը, ապրիլի 20-ին էլ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին է ուղեկցել սահմանամերձ Կիրանցում:

ՌԻՍԿԵՐԸ ԿԱՃԵՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմից հայտնել են. «Ճշգրտության համար արձանագրենք, որ Ադրբեջանը ստանում է իրեն պատկանող երկուսուկես գյուղ, որովհետեւ Կզըլ Հաջըլի գյուղի տարածքն ամբողջությամբ, Աշաղը Ասկիպարա գյուղի տարածքի մի զգալի մասը մինչ այս էլ եղել է Ադրբեջանի տիրապետության ներքո: Իսկ Հայաստանի Հանրապետությունն այս գործընթացում ստանում է սահմանազատման հետ կապված եւ անվտանգային ռիսկերի նվազեցում»: Իրականում, անվտանգային ռիսկերը ոչ թե նվազելու են, այլ անհամեմատ աճելու: Գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո խաթարվելու է այդ հատվածով Հայաստան-Վրաստան, Իջեւան-Նոյեմբերյան տրանսպորտային հաղորդակցությունը, Ոսկեպար գյուղի կապը Իջեւանի եւ Նոյեմբերյանի հետ: Ադրբեջանին են հանձնելու սահմանագոտում իշխող բարձունքներ, այդտեղ 30 տարում ամրացված մարտական դիրքեր, ջրերի մեծ ակունքներ: Այն, որ սահմանի այդ հատվածում բանակի փոխարեն սահմանապահներ են կանգնելու, ամենեւին չի նվազեցնում անվտանգային ռիսկերը: Նիկոլ Փաշինյանն ինքն է խոստովանել, որ 4 գյուղերի տարածքների հանձնումից հետո երաշխիք չկա, որ պատերազմ չի լինելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՆԻ

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրով Կառավարությունը ոչ միայն կսուբսիդավորի ապահովագրավճարները, այլ նաեւ կաջակցի ապահովագրական ընկերություններին՝ ապահովագրական հատուցումների որոշակի չեմը գերազանցելու դեպքում փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Այս մասին կառավարության նիստի ժամանակ ասաց Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը՝ ներկայացնելով համապատասխան նախագիծը:

Նախարարի խոսքով՝ նախագծի ընդունումը պայմանավորված է 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացումը ապահովելու անհրաժեշտությամբ: Ծրագրի շրջանակում 2023 թվականին ապահովագրվել էին ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի եւ վարսակ մշակաբույսերը: Ապահովագրվող ռիսկերն էին՝ գարնանային ցրտահարությունը, երաշտը, կարկուտը եւ հրդեհը:

«2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվել էր 11662 հա հողատարածք, ապահովագրավճարը կազմել էր շուրջ 1,8 մլրդ դրամ, դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրվել էր շուրջ 3864 ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.7 մլրդ դրամի չափով:

2024 թվականին, պայմանավորված ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության շուկայից վերաապահովագրական ընկերության դուրս գալով, ապահովագրական ընկերությունները չէին կարող ստանձնել ապահովագրության ռիսկերն ամբողջությամբ՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված բարձր վնասաբերությունը: Այդ է պատճառը, որ ծրագիրը ժամկետից ուշ մեկնարկեց. ուստի անհրաժեշտություն է առաջացել այս տարվա համար ժամանակավոր լուծում գտնել եւ վերափոխել ծրագրի մոտեցումները»,- ասաց Պապոյանը:

Նախարարը նշեց, որ ծրագրին ապահովագրական ընկերությունների մասնակցությունը ապահովելու համար առաջարկվում է, որ այս տարի կառավարությունը, բացի ապահովագրավճարների սուբսիդավորումից, մասամբ կիսի ապահովագրական ռիսկը, այսինքն՝ աջակցի նաեւ ապահովագրական ընկերություններին՝ ապահովագրական հատուցումների որոշակի շեմը գերազանցելու դեպքում՝ փոխհատուցում տրամադրելու միջոցով. «Մասնավորապես՝ գործակալության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը փոխհատուցել ապահովագրական ընկերության կողմից ընդհանուր հավաքագրված ապահովագրավճարի հանրագումարի 70 տոկոսի չափը գերազանցող տնտեսվարողներին՝ փոխհատուցված ապահովագրական հատուցումների 80 տոկոսը»,- ասաց նախարարը:

Պապոյանի խոսքով՝ 2024 թվականին կառավարությունը աջակցություն է ցուցաբերելու նաեւ գյուղատնտեսությանը ապահովագրողների ազգային գործակալության գործառնական եւ մնացած այլ ծախսերի համար:

«Հիմք ընդունելով մշակաբույսերի ապահովագրության ժամկետներն ըստ մշակաբույսերի եւ ռիսկերի՝ նախատեսում ենք, որ այս տարի կկարողանանք ապահովագրել դեղձը, սալորը, խնձորը, կեռասը, բալը, ձմերուկը, սեխը, կարտոֆիլը կարկուտի ռիսկից, իսկ հացահատիկային մշակաբույսերը՝ ցորենը, գարին եւ վարսակը՝ երաշտի ռիսկից»,- եզրափակեց Պապոյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանում բյուջետային ծրագրերի գնահատման գործընթացի ներդրման կարիք է առաջացել: Այս մասին ապրիլի 22-ին Ազգային ժողովում «Բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծի քննարկման ժամանակ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ասաց ՀՀ ֆինանսների փոխնախարար Վահան Սիրունյանը:

Ըստ փոխնախարարի՝ բյուջետային ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ներդնել դրանց գնահատման կանոնավոր գործընթաց: Այն մշակվել է Հայաստանի ֆինանսների նախարարության կողմից:

Նոր օրինագծով նախատեսվում է սահմանել վերը նշված լիազորությունների կարգը: Այսպիսով՝ կառավարությանը կտրվեն բյուջետային ծրագրերը գնահատելու լիազորություններ: Այդ գործառույթներն իրականացնելու է ֆինանսների նախարարությունը՝ կառավարության սահմանած կարգով: Այն իր հերթին կհաստատվի օրենքի ուժի մեջ մտնելուց երեք ամսվա ընթացքում:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԴԵՊԻ ՏԱՎՈՒՇ ՓԱԿ ԵՆ

ArmLur.am-ին քաղաքացիների կողմից ահազանգեր հասան այն մասին, որ Տավուշ տանող բոլոր մուտքերը փակ են:

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը կանգնեցնում է մեքենաները, եթե ուղղությունը դեպի Ոսկեպար է, ապա հորդորում է շրջադարձ անել եւ լքել Տավուշը:

Լրագրողների դեպքում պահանջում են անձը հաստատող փաստաթուղթ եւ լրագրողական բեյջ, ապա նոր թույլ են տալիս մուտքը: Սա արվում է, որպեսզի մարդիկ չհավաքվեն Տավուշում, եւ հանկարծ զանգվածային պրոցեսներ չսկսվեն:

Տեղեկացնենք, որ երեկ եւս փակ էր դեպի Ոսկեպար, Կիրանց տանող ավտոճանապարհը: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որ խոսում է ժողովրդավարության մասին, իրականում արգելում եւ խոչընդոտում է մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը: Նախկինում ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը դժգոհում էր, թե քաղաքացիների ազատ տեղաշարժը միշտ պետք է անխափան լինի: Հիմա անում է այն, ինչ քննադատում էր նախկինում:

Սա խոսում է Նիկոլ Փաշինյանի վախի մասին, որ ինքն Ադրբեջանին տված խոստումը չի կարողանում իրականացնել: Հայը չի՛ հանձնվում:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՓՈԽՎԻ

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով ապրիլի 22-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Կոմիտասի պողոտա - Գյուլբենկյան փողոց խաչմերուկում:

Մասնավորապես՝ Կոմիտասի պողոտայից դեպի Քոչարի փողոց ձախ շրջադարձը կթույլատրվի առանձին լուսացույցով:

Միաժամանակ նշված խաչմերուկում կկատարվի լուսացույցի աշխատանքային ռեժիմի փոփոխություն:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 2 մարդ զոհվել է, 41-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՓՈՓԵԼ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ս.թ. ապրիլի 12-ին կայացել է «Ֆասթ Շիֆթ» ընկերության տարեկան հաշվետվությունը: 2018 թվականին հիմնադրված «Ֆասթ Շիֆթ» ընկերության գլխավոր առաքելությունը՝ մատուցել պարզ, հարմարավետ, ապահով եւ հասանելի վճարահաշվարկային ծառայություններ, շարունակվում է: Կազմակերպությունը, առաջնայինը գնահատելով հաճախորդների ժամանակը եւ ֆինանսական անվտանգությունը, հնարավորություն է տալիս նվազեցնել ֆինանսական գործարքների վրա ծախսվող ժամանակը եւ գումարը:

«Էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի քանակն աճել է շուրջ 67 տոկոսով, գործարքների քանակը եւ շրջանառությունը կրկնապատկվել են. եւ սա դեռ սկիզբն է: Մենք ունենք ամբիցիոզ պլաններ: Առաջիկա տարիներին ունենք բիզնեսի զարգացման մեծ նպատակներ, եւ կուզենայի շեշտել հետեւյալը՝ բիզնեսի աշխարհագրության ընդլայնումը դեպի արտերկիր, «Ֆասթ Թիքեթ»-ի լրիվ նոր ձեւաչափի եւ որակի գործարկում: Վստահ եմ, որ 2024 թվականի արդյունքները գերազանցելու են բոլորիս սպասումները», - ասել է «Ֆասթ Շիֆթ» ընկերության խորհրդի նախագահ Ռոման Բաղալյանը՝ներկայացնելով ընկերության 2023 թվականի ձեռքբերումները:

«Ֆասթ Շիֆթ»-ի տնօրեն Իրինա Գասպարյանը խոսել է ընկերության 2024 թվականի նպատակների, ռազմավարության եւ զարգացումների մասին: Ըստ նրա՝ «Ֆասթ Շիֆթ»-ի ռազմավարական ծրագիրն այս տարի միտված է ընկերության զարգացմանը՝ թվային փոխակերպման թիրախավորմամբ. «2024 թվականին մենք թիրախավորում ենք թվային փոխակերպման ուղղությունը եւ նորանոր ծառայություններ ենք ներկայացնելու դրամապանակում: Այն է՝ առցանց վարկավորումը 24/7 ռեժիմով, տարատեսակ դրամական փոխանցումներ արտերկիր եւ արտերկրից դեպի Հայաստան, ինչպես նաեւ ծառայությունների սպեկտորի մեծացում՝ վարկային ծառայություններ, պետական հատվածի ընդլայնում, համագործակցություն տարատեսակ արտաքին գործընկերների հետ»:

«Ֆասթ Շիֆթ» ընկերության թիմն այս տարի շարունակելու է սպասարկման որակի բարձրացումը: Ընկերությունը վստահ քայլերով ընթանում է դեպի զարգացման տեսլականի իրագործում, այն է՝ շուկայում դիրքավորվել որպես բազմատեսակ ծառայությունների վճարային ագրեգատոր՝ մեկ միասնական ագրեգացիոն API-ով:

Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների զարգացման տեմպերը, ինչպես նաեւ այդ տեխնոլոգիաների նկատմամբ հասարակության կողմից աճող հետաքրքրությունը՝ առցանց առեւտուր, անհպում վճարում եւ այլն, «Ֆասթ Շիֆթ» բջջային հավելվածի համակցումն ու 24/7 հասանելիությունը հնարավորություն են տալիս հաճախորդին նվազեցնել գործարքների վրա ծախսվող ժամանակը եւ գումարը:

Team Telecom Armenia

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

2024 թվականի ապրիլի 22-ին ամբողջ աշխարհում նշվում է «Երկրի օրը»: Այս տարի բոլոր միջոցառումները կենտրոնացած են «Մոլորակն ընդդեմ պլաստիկի» թեմայի շուրջ: Օրվա խորհրդով Team Telecom Armenia-ն ամփոփել է մեկ տարվա ընթացքում շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ ընկերության ներսում տարված աշխատանքները:

Էներգաարդյունավետ լուծումների ներդրում

Team-ն արդեն մի քանի տարի է կիրառում է էներգաարդյունավետ լուծումներ՝ կապի եւ հաղորդակցության էներգապահովման համար օգտագործելով արեւային էներգիա: 2023 թ.-ին ընկերության աշխատանքներում օգտագործելու նպատակով՝ արդեն գործող 25 արեւային կայաններին ավելացվել է եւս 8-ը, ինչի շնորհիվ արեւային արտադրանքի մասնաբաժինն ընդհանուր էներգասպառման մեջ գրանցել է շուրջ 7% աճ նախորդ տարվա համեմատ: Այս գործընթացն ընկերությունում լինելու է շարունակական:

Էլեկտրական մեքենաների օգտագործումը խթանելու նպատակով գործարկվել է Team Energy արագ լիցքավորման կայանների ցանցը: Այժմ Հայաստանի ողջ տարածքում կա շուրջ 50 կայան: Լիցքավորման կայաններից օգտվելու համար անհրաժեշտ է ներբեռնել Team Energy հավելվածը:

Բացի սրանից, ընկերությունը հենց իր ավտոպարկում էլ նախապատվությունը տալիս է էլեկտրական մեքենաներին. անձայն շարժիչներով եւ զրոյական արտանետումներով մեքենաների մասնաբաժինը կազմում է 14 %:

Team-ի ռազմավարական ծրագրի՝ NGN ցանցի կառուցման արդյունքում պղնձե մալուխները փոխարինվում են օպտիկամանրաթելային ցանցով, ինչը էականորեն նվազեցնում է ածխածնի երկօքսիդի արտանետումները: Նշենք նաեւ, որ այս ցանցի գործարկման արդյունքում ընկերությունը միայն 2023 թվականին խնայել է 275,630 ԿՎտժ էլեկտրաէներգիա:

Թափոնների կրճատում եւ կայուն զարգացում

Էլեկտրոնային թափոնների (e-waste) ստեղծումից խուսափելու համար ընկերությունը վերանորոգում եւ կրկնօգտագործում է կապի ապահովման սարքերը: Այսպիսով՝ 2023 թ.-ին ավելի քան 14 հազար հեռահաղորդակցության էլեկտրոնային սարք չի հայտնվել աղբավայրում, այլ վերանորոգվել, արդիականացվել եւ կրկնօգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ՝ թղթի վերամշակման ծավալներն աճել են 36 %-ով, իսկ ներդրված eSIM ծառայության շնորհիվ ընկերությունը խուսափել է շուրջ 600 կգ պլաստիկի օգտագործումից՝ արձանագրելով «խուսափած» պլաստիկի տարեկան 57 % աճ: Թղթի թափոններ չկուտակելու համար Team-ի բոլոր մասնաճյուղերում հասանելի է նաեւ E-pen (էլեկտրոնային գրիչ) տեխնոլոգիան:

Ի դեպ, My Team հավելվածի միջոցով միայն այսօր «շեյքի» մասնակիցները կարող են շահել էներգախնայող ԼԵԴ լամպեր եւ անլար լիցքավորիչներ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՇԻՆԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒՐՔԵՐԸ ԲԱՋՄԱՊԱՏԿՎԵԼ ԵՆ

Հունվարի 1-ից շինթույլտվության երկարացման տուրքերը մի քանի անգամ բարձրացվել են:

Այս մասին ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ ասաց քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի պարտականությունները կատարող Դավիթ Գրիգորյանը:

«Երեւան քաղաքում մասնավորապես, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում շինթույլտվության երկարացման համար, 3 ամիս ժամկետով անվճար տրամադրվում է, բայց դրանից հետո բավականին մեծ գումարներ է պետք վճարել, որպեսզի շինթույլտվությունը երկարացվի: Հունվարի 1-ից կարգավորումը արդեն ուժի մեջ է, ու մենք հուսով ենք, որ կառուցապատողներն ավելի արագ կիրականացնեն իրենց քաղաքաշինական ծրագրերը՝ խուսափելով նման բարձր տուրքերից»,- ասաց նա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ». ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 14-ին՝ սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ՝ «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ»-ում (FOODPARK BY DOWNTOWN), ժամը 15:00-ին:

Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին եւ քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Ընդհանուր ժողովին մասնակցելու եւ տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բոլոր այն բաժնետերերը (անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից), ովքեր 2024 թվականի ապրիլի 29-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի եւ վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից:

Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը եւ անհրաժեշտ տեղեկատվությունն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բոլոր բաժնետերերին կուղարկվի ապրիլի 29-ին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍԹԵՆԴԱՓ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ

«ԿԱՆԱՅՔ ՇԱՏ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԱՎԵԼԻ ԽՈՀԵՄ ԵՆ»

«Որքան էլ տղամարդիկ սիրում են ասել, որ իրենք միայնակ են որոշումները կայացնում, սակայն կան հարցեր, որոնց ժամանակ սիրով լսում են կնոջը, իսկ կանայք շատ հարցերում ավելի խոհեմ են: Իսկապես, կան հարցեր, որոնց դեպքում պետք է լսել կնոջը»,-այս մասին Armlur.am-ի հետ զրույցում ասաց դերասան Հովհաննես Դավթյանը՝ անդրադառնալով «Կաբlook» անվանումով նոր stand-up-ին:

Դերասանը նշեց, որ առաջին անգամ «Կաբlook»-ը ներկայացրել էր Մարտի 8-ին, քանի որ իր թիմի հետ ձեւավորված ավանդույթ ունի, որ ամեն տարի կանանց տոնի առթիվ նոր սթենդափով է հանդես գալիս:

«Կանանց թեմայով ներկայացումները շատ են սիրվում: Թվում է՝ թեմային արդեն շատ ենք անդրադարձել, բայց, միեւնույնն է, նոր մոտեցումներ ենք գտնում: Կանանց թեմայով մյուս ներկայացումների պես «Կաբlook»-ը շատ է սիրվել, ընդ որում՝ անկախ սեռից: Պրեմիերան կայացավ մարտի 8-ին, իսկապես մեծ հաջողություն ունեցանք, 3 սեանս խաղացի, ինչը մեր (հումորի) ոլորտում չլված հաջողություն էր: Հաջորդ հանդիպումն էլ տեղի ունեցավ մարտի 9-ին (2 սեանս): 11.000 հանդիսատես 2 օրում դիտեց «Կաբlook»-ը, սակայն այն դիտել ցանկացողների թիվը նույնիսկ ավելի մեծ էր. մարտի 4-ից արդեն sold out էր, տոմսեր, պարզապես, չկային: Ապրիլին «Կաբlook»-ը կրկին բեմում է»,-ասաց դերասանը՝ նշելով, որ ժամեր առաջ է վերադարձել Եվրոպայից, ուր մեկնել էր հյուրախաղերի. «Կաբlook»-ի «աշխարհագրությունը» գնալով մեծանում է. «Շրջագայությունները սկսեցինք Գերմանիայից: Ելույթներ ունեցա Ֆրանկֆուրտում, Քյոլնում եւ Համբուրգում: Հաջորդը Ֆրանսիան էր՝ Լիոն եւ Մարսել, ապա Բելգիա, Բասկերի երկիր: Իսկապես շատ ջերմ հանդիսատես ունեմ. բոլոր կատակները՝ անկախ աշխարհագրությունից, հասկանում են, թեպետ, անկեղծանամ, որ սկզբնական շրջանում մտավախություն ունեի, որ հումորները կարող են ընկալելի չլինել, սակայն մտավախությունն անտեղի էր»,-խոստովանում է նա:

Դերասանի խոսքով՝ իրեն դիտելու են գալիս մարդիկ, ովքեր արդեն վաղուց ծանոթ են իր գործունեությանը, հետեւում են իր ելույթներին, իհարկե, կան նաեւ մարդիկ, ովքեր Հովհաննեսին հիշում են իր հայտնի՝ Մխոյի կերպարով. «Ինչ խոսք, որպես դերասան՝ ես հենց Մխոյի կերպարով հայտնի դարձա, դա անհերքելի փաստ է, բայց, միաժամանակ, կերպարի հետ ասոցիացիա չի մնացել: Երկար տարիներ օրուգիշեր աշխատել եմ իմ անվան համար, որ ինձ միայն չկապեն այդ կերպարի հետ, աշխատել եմ այնպես անել, որ ինձ ճանաչեն անունով ազգանունով: Փորձում եմ աշխատանքիս մեջ լինել բազմաժանր, բայց, իհարկե, կան դեռ մարդիկ, որ մինչ օրս ինձ Մխո են ասում, հիմնականում մարզերում եւ Լոս Անջելեսում: Կարծում եմ, որ դա էլ կանցնի. իհարկե, այնպես չէ, որ այդ փաստից սրտնեղում եմ»,-ասաց Հովհաննեսը:

Տարիներ շարունակ բուռն գործունեություն ծավալելով՝ Հովհաննես Դավթյանը չի հերքում, որ լճացման վախ ունենում է. «Կարծում եմ, որ յուրաքանչյուր ստեղծագործող այդ վախը պետք է սրտում պահի, քանի որ դա չի նշանակում, որ տրվել ես վախին, հակառակը՝ մոտիվացնում է, որ առաջ գնաս, նոր մտքերով հանդես գաս: Կարծում եմ, որ լճացման վախը, նույնիսկ, ցանկալի է, որ մտքումդ ունենաս, քանի որ դրա արդյունքում նաեւ փորձում ես միշտ արդիական լինել՝ աշխատանքդ հարստացնելով նոր եւ հետաքրքիր գաղափարներով»,-եզրափակեց դերասանը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՌԵԱԼԸ» ՀԱՂԹԵԼ Է «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ»

Իսպանիայի առաջնության 32-րդ տուրի տնային խաղում Մադրիդի «Ռեալը» կամային հաղթանակ է տարել «Բարսելոնայի» նկատմամբ:

Սանտյագո Բեռնաբեուում կայացած հանդիպումն ավարտվել է 3:2 հաշվով:

Կառլո Անչելոտիի թիմն ունի 81 միավոր եւ գլխավորում է Իսպանիայի առաջնության աղյուսակը, Չավիի «Բարսելոնան» 70 միավորով երկրորդն է:

Հաջորդ տուրում «Ռեալը» արտագնա խաղում կխաղա «Ռեալ Սոսյեդադի» հետ, իսկ «Բարսելոնան» կհյուրընկալվի «Վալենսիային»:

«ԱԼԱՇԿԵՐՏԸ» ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵՑ «ՎԱՆ»-ԻՆ

Ֆուտբոլի Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնության 30-րդ տուրում Երեւանի «Ալաշկերտը» հյուրընկալվեց Չարենցավանի «Վանին» եւ առավելության հասավ 3:2 հաշվով:

Առաջին խաղակեսում աչքի ընկավ «Ալաշկերտի» պաշտպան Արտակ Եդիգարյանը:

Երկրորդ խաղակեսում «Վանից» մրցակցի դարպասը գրավեցին գվինեացի հարձակվող Սոմո Տուրեն եւ նիգերիացի կիսապաշտպան Մեթյու Գբոմադուն:

Ավելացված ժամանակում դուբլի հեղինակ դարձավ «Ալաշկերտի» ռուսաստանցի կիսապաշտպան Դավիթ Խուրցիձեն:

«Ալաշկերտը» 41 միավորով 5-րդն է, «Վանը» 8-րդ տեղում է՝ 26 միավորով:

Հայաստանի առաջնություն, 30-րդ տուր. Վան - Ալաշկերտ՝ 2:3

Սոմո Տուրե, 51, Մեթյու Գբոմադու, 87 - Արտակ Եդիգարյան, 34, Դավիթ Խուրցիձե, 90 + 3, 90 + 4:

ԻԳԱ ՇՎՅՈՆՏԵԿԸ՝ 100 ՇԱԲԱԹ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ

Լեհ թենիսիստուհի Իգա Շվյոնտեկը 100-րդ շաբաթն է անցկացնում Կանանց թենիսի ասոցիացիայի դասակարգման աղյուսակի առաջին տեղում:

22-ամյա մարզուհին 9-րդն է պատմության մեջ այդ ցուցանիշով:

Շտեֆի Գրաֆ՝377 շաբաթ

Մարտինա Նավրատիլովա՝ 332 շաբաթ

Սերենա Ուիլյամս՝319 շաբաթ

Կրիս Էվերտ՝260 շաբաթ

Մարտինա Հինգիս՝209 շաբաթ

Մոնիկա Սելեշ՝178 շաբաթ

Էշլի Բարթի՝121 շաբաթ

Ժյուստին Էնեն՝117 շաբաթ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ

Պարի միջազգային օրը կնշվի ապրիլի 29-ին մասշտաբային միջոցառմամբ: Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնի նախաձեռնությամբ Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնում կնշվի պարի միջազգային օրը՝ «Պարողների օրը՝ պարողների համար» խորագրի ներքո:

Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբը երեկոյի առաջին մասում հանդես կգա հայկական եւ միջազգային պարեղանակների երաժշտական կատարումներով, նվագարանների հետ միասին ելույթ կունենան սիրված երգիչներ Արփին, Սեւակ Ամրոյանը եւ Ջարուհի Բաբայանը:

Երեկոյի երկրորդ հատվածում Երեւանի պարարվեստի պետական քոլեջի ուսանողները հանդիսատեսի դատին կհանձնեն Դավիթ Գալստյանի բեմադրությամբ «Բեթհովեն. Սիմֆոնիա No. 7» բալետային ներկայացման առաջնախաղը:

Ոլորտի զարգացման գործում ունեցած ավանդի համար ոլորտի ներկայացուցիչները կպարգեւատրվեն մրցանակներով:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՓԱԿՄԱՆ ԳԱԼԱ ՀԱՄԵՐԳԸ

Ապրիլի 27-ին՝ ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կկայանա Ֆրանկոֆոնիայի միջազգային օրերի փակման գալա համերգը: Այն նվիրված է ֆրանսիացի մեծանուն կոմպոզիտոր Ֆրանսիս Պուլենկի 125-ամյակին:

Համերգն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության եւ Ֆրանսիական ինստիտուտի հետ համատեղ:

Համերգին ելույթ կունենան Հայաստանի պետական կամերային նվագախմբի ընդլայնված կազմը, Հայաստանի պետական կամերային երգչախումբը, Երեւանի պետական կամերային երգչախումբը: Դիրիժոր՝ Ֆիլիպ Ամելունգ (Գերմանիա): Մենակատար՝ Ժան-Պոլ Գասպարյան (դաշնամուր / Ֆրանսիա), Գալինա Ցոլակյան (սոպրանո):

Ծրագրում՝ Ֆրանսիս Պուլենկ - Stabat Mater, FP 148, Ֆրանսիս Պուլենկ - Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար, ռե մինոր, FP 146:

Ֆրանկոֆոնիա տերմինը առաջին անգամ օգտագործվել է 1880 թվականին՝ ֆրանսիացի աշխարհագրագետ Օնեսիմ Ռեկլուի կողմից: Այդ տերմինը նա օգտագործել է նկարագրելու համար այն մարդկանց եւ երկրները, որոնք խոսում են ֆրանսերեն: Ֆրանկոֆոնիա բառն առաջացել է «ֆրանսերեն» բառից:

● *Ապրիլի 23-ին՝ժամը 20:00-ին, «Թատրոն տանիքում» կբեմադրվի «Օրերի փրփուրը» ներկայացումը՝հիմնված Բորիս Վիանի ստեղծագործության վրա: Տոմսերի արժեքը՝5000-7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի օպերատիվ կերպով ստանամ ծանուցումները, տեղեկանամ կիրառված արգելանքների, վարույթների կարծման մասին:

Վազգեն Մանաթյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին իր վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներին, կիրառված բոլոր արգելանքներին կարող է ծանոթանալ՝ գրանցվելով կայքի «Անձնական գրասենյակ» հարթակում՝ մուտքագրելով համապատասխան տվյալները:

Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել կատարողական վարույթներին առնչվող թարմացումները, տեղեկություն ստանալ ծառայությունում իրենց վերաբերյալ հարուցված կատարողական վարույթների, կիրառված բոլոր արգելանքների, կատարողական վարույթի ընթացքի, կարծման վերաբերյալ, դիտել եւ ներբեռնել 2021 թվականի հունվարի 1-ից հետո հարուցված կատարողական վարույթների շրջանակում կայացված որոշումները, ծանոթանալ կատարողական վարույթի հարուցման հիմք հանդիսացած վարչական ակտերին եւ վարչական մարմնի կողմից այդ ակտերի մասին հասցեատիրոջն իրազեկելուն:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել նաեւ ակտը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցներին, կատարել վճարումներ միաժամանակ մի քանի կատարողական վարույթով, հետեւել ապարգելադրման գործընթացին:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն գիտական գործունեության համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

Նարեկ Մնացականյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կազմակերպության ղեկավարը ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով գրավոր դիմում է ՀՀ գիտության կոմիտե՝ ներկայացնելով գիտական միջոցառման կազմակերպչի հրավերը կամ զեկույցն ընդունելու մասին ծանուցումը, գիտական գործուղման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտը եւ գործուղվող գիտաշխատողի գիտական արդյունավետության բնութագիրը (վերջին 3 տարիների ընթացքում հայտատուի գիտական հրապարակումների (մինչեւ տասը) եւ գիտական միջոցառումներում հրավիրված կամ բանավոր զեկույցների (մինչեւ հինգ) ցանկերը):

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդունելի է նաեւ կոմիտեի մրցույթների հայտերի եւ հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (https://grants.scs.am) գրանցված գործուղվող գիտաշխատողի անհատական (տասներկու նիշանոց) կոդը ներկայացնելը:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սողոմոն Թեհլիրյանի ազգականները՝ Արփի Օսկանյանը եւ Անուշ Օսկանյան-Օհանյանը, ցեղասպանության թանգարան-ինստիտուտին են հանձնել Սողոմոն Թեհլիրյանի անտիպ օրագրությունը եւ լուսանկարները

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 5 / +18 + 22
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 / +17 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 / +22 + 24
Գեղարքունիք	+ 2 + 5 / +14 + 18
Լոռի	+ 3 + 8 / +20 + 22
Տավուշ	+ 8 + 12 / +23 + 27
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 / +15 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 12 / + 22 +
Արարատ	+12 + 14 / +27 + 29
Արմավիր	+10 + 12 / +26 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 / +16 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+11 + 13 / +26 + 29
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 / +25 + 27
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 / +18 + 20
ԼՂՀ	+ 2 + 6 / +17 + 21
Երեւան	+ 18 + 20 / + 26 + 28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*